

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. փետրվարի 14-ից 20-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Փետրվարի 14-17-ը առանձին շրջաններում դիտվել են թույլ տեղումներ: Հանրապետության տարածքում տեղումների գումարային քանակը կազմել է 0,3-4մմ: Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը փետրվարի ողջ շաբաթվա ընթացքում բարձր է եղել նորմայից 1-4 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքում՝ հովիտներում՝ +17...+18°C, նախալեռներում՝ +9...+11°C, Տավուշում՝ +15...+17°C, Արմավիրում՝ +16 °C, Լոռիում՝ +12...+15°C, Արարատյան դաշտում՝ +12...+15°C, Վայոց ձորում՝ նախալեռներում՝ +14°C, լեռներում՝ +5°C, Արագածոտնում՝ նախալեռներում՝ +7...+14°C, լեռներում՝ +3°C, Կոտայքում՝ նախալեռներում՝ +10°C, լեռներում՝ +6°C, Գեղարքունիքում՝ 0...+6°C, Շիրակում՝ 0...+5°C, Երևանում՝ +14...+15°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Արագածոտնում՝ լեռներում՝ -14...-15°C, նախալեռներում՝ -3...-6°C, Գեղարքունիքում՝ -10...-14°C, Վայոց ձորում՝ լեռներում՝ -12°C, նախալեռներում՝ -1°C, Շիրակում՝ -11...-12°C (Աշոցքում՝ -20°C), Կոտայքում՝ լեռներում՝ -8...-12°C, նախալեռներում՝ -4°C, Արմավիրում՝ -6°C, Լոռիում՝ -7...-12°C, Արարատյան դաշտում՝ -2...-3°C, Տավուշում՝ -2...-3°C, Սյունիքի հովիտներում՝ -3...+2°C, նախալեռներում՝ -4...-10°C, Երևանում՝ -3...-4°C:

Շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում դիտվել է մառախուղ 100-500մ տեսանելիությամբ:

Փետրվարի 18-ին Ստեփանավանում և Գավառում դիտվել է քամու ուժգնացում մինչև 17-22մ/վրկ արագությամբ:

Փետրվարի 20-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը Արագած թ/լ-ում կազմում է 81սմ, Զերմուկում՝ 66սմ, Ամբերդում՝ 47սմ, Հրազդանում՝ 44սմ, Ամասիայում, Սեմյոնովկայում՝ 34-36սմ, Ֆանտանում՝ 30սմ, Աշոցքում, Ապարանում՝ 22-23սմ, մնացած լեռնային շրջաններում՝ 3-18սմ: Արարատյան դաշտում, Տավուշում, Լոռիում և Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայում է:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ (13.02.22-20.02.2022թթ. տարբերությունը) և կազմել՝ 1900.37մ (20.02.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 17 սմ-ով: